Պաշտոն՝ Դաշտային աշխատանքների համակարգող
Աշխատանքի տեսակը՝ գործարքային
Վայրը՝ Երևան և ՀՀ մարզեր
Վերջնաժամկետ՝ մինչև հաստիքի համալրումը

Աշխատանքի նկարագրություն

Տարբեր ոլորտներում հանրային կարծիքի ուսումնասիրության ծրագրերի իրականացման համար ՀՌԿԿ-Հայաստանը փնտրում է դաշտային աշխատանքների համակարգող(ներ)ի: Համակարգողը իրականացնելու է դաշտային աշխատանքների պլանավորում, կազմակերպում, վերահսկում և մշտադիտարկում:

Աշխատանքային պարտականություններ

- ✓ Կազմել և հետևել դաշտային աշխատանքների պլանին,
- ✓ մասնակցել հարցազրուցավարների դասընթացին,
- ✓ ամենօրյա ռեժիմով մշտադիտարկել տվյալները՝ օգտագործելով IBM SPSS կամ STATA փաթեթներից մեկը, և MS Excel ծրագիրը,
- ✓ պատրաստել շաբաթական և ամփոփիչ հաշվետվություններ աշխատանքների ընթացքի, հնարավոր խնդիրների ու առաջարկված լուծումների մասին, այդ թվում՝ յուրաքանչյուր հարցազրուցավարի կատարողականը և տրանսպորտային ծախսերը,,
- ✓ անհրաժեշտության դեպքում իրականացնել ստուգայցեր:

Պահանջվող որակավորումներ և հմտություններ

- ✓ Բարձրագույն կրթություն՝ նախընտրելի է հասարակական գիտությունների ոլորտում (ուսանողները նույնպես կարող են դիմել),
- ✓ IBM SPSS-ի կամ STATA-ի, և MS Excel-ի իմացություն,
- ✓ արագ կողմորոշվելու և խելամիտ որոշումներ կայացնելու ունակություն,
- ✓ հաղորդակցության գերազանց հմտություններ,
- ✓ կազմակերպվածություն,
- ✓ տվյալների հետ աշխատելու կարողություն և ցանկություն,
- ✓ հայերենի գերազանց իմացություն (ռուսերենի և անգլերենի իմացությունն առավելություն է),
- ✓ հարցազրուցավարի և/կամ տվյալների հավաքագրման աշխատանքներում ներգրավվածության փորձ (ցանկալի է),
- ✓ թիմային աշխատանքի հմտություններ,
- ✓ սեղմ ժամկետներում արդյունավետ աշխատելու կարողություն,
- ✓ Հայաստանի տարածքում ճամփորդելու պատրաստակամություն,
- ✓ պատասխանատվություն, ուշադրություն և ճշտապահություն:

Դիմելու համար ուղարկեք Ձեր **ինքնակենսագրականը (CV)** omhr@crrc.am էլ. փոստի հասցեին՝ նամակի վերնագրում նշելով «**Համակարգող**» բառը: Արդյունքների մասին տեղեկացում կուղարկվի միայն նախնական ընտրությունն անցած դիմորդներին:

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամը հետազոտական կենտրոն է, որի նպատակն է խթանել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը Հայաստանում: Կազմակերպության մասին ավելի մանրամասն՝ http://www.crrc.am/: